# ՀԱՅ ՏԱՌԵՐ

Հայ տառե՛ր, հայրենիքէ մը աւելի սիրելի էք։

Ու այն գլուխը որ առաջին անգամ ձեր վրայ ծռեցաւ և ծնաւ զձեզ, ան աւելի նուիրական է քան մեր հայրունի սարը տապանակիր։

Մասիսի ետին, արև, այսօր մի՛ տնտնար, ծագէ Օշականի նկուղէն ներս։

Լուսաւորիչն է իջեր հոն, կը համբուրէ հայ գրականութեան արարչագործ ճակատը։

Հօտաղներու սրինգով արթնցուցէք Մեսրոպը. մտքի ու տաղանդի ռահվիրայներ կ՚օրհնեն անոր մեծ յիշատակը։ Հալածանքները սոսկալի ճանկերով չի կրցան զմեզ ապշոպել, ջնջել հայ գոյութիւնը, զի նախնիք մեր ցեղին սորվեցուցին յամառօրէն գրկել խաչն ու գիրք։

Հայ գերեզմանին վրայ Ապրիլը միշտ պիտի սփռէ գարունի նոր ծաղիկներ...

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ